ԵրիտասարդՊատմագետներիԱսոցիացիա ՀԿ -ի

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց 2022

Հետազոտականաշխատանք

Թեմա՝ Շարադրությունը որպես լեզվամտածողության զարգացման միջոց

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Նավոյան

Մեղրաձորի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....2

Վարկած.....3

Խնդրի վերհանում

Շարադրություններ շատ քիչ են հանձնարարվում.....4

Տվյալների հավաքագրում..... .6

Վերլուծում……11

Եզրահանգում 15

Գրականության ցանկ 16

Ներածություն

Լեզվի և մտածողության փոխհարաբերության խնդիրը մշտապես արծարծվել է փիլիսոփաների, հոգեբանների, գրականագետների, լեզվաբանների աշխատություններում:

Ընդունված է ասել, որ մարդը մտածում է լեզվով: Թվում է, թե մտածողությունն ու լեզուն առանձին գոյություն ունեցող երևույթներ են, և ցանկացած պահի հնարավոր է դրանք տարանջատել: Սակայն դա այդպես չէ , մտածողությունն ու լեզուն հանդես են գալիս համատեղ և գործնականում անհնար է զատորոշել,թե ինչ է լեզուն որպես առանձին երևույթ, և ինչ է մտածողությունը որպես մեկ այլ երևույթ:

<<Մենք տարբեր լեզուներով ենք խոսում>> ասող մարդիկ նկատի ունեն մտածելը: Խոսելն ու մտածելը լեզվական այս դրսևորման մեջ միևնույն երևույթն են. խոսելը հասկացվում է մտածել: Մարդը կարող է նախ մտածել մի լեզվով, հետո մտածածը ասել մեկ ուրիշով, բայց չի կարող նույն պահին խոսել, օրինակ, գերմաներեն, բայց մտածել անգլերեն: Սա մեկ անգամ ևս վկայում է , որ կոնկրետ մտածողությունը և կոնկրետ լեզուն համատեղ են:

Դարեր շարունակ օտար բռնակալները փորձել են վերացնել մեր լեզուն, որպեսզի հեշտությամբ բաժան-բաժան անեն մեր ժողովրդին ու ձուլեն իրենց մեջ: Սակայն այդ բանը նրանց չի հաջողվել, քանի որ մեր ժողովուրդը մեծ սիրով ու նվիրումով պահել-պահպանել է իր մայրենին, մաքրել այլևայլ մոլախոտերից ՝ գիտակցելով, որ ամենից առաջ նա է փրկության հույսն ու ապավենը, հատու սուրն ու վահանը; Այս հանգամանքը, անկասկած, ժողովրդասիրության դաստիարակմանը զուգընթաց աշակերտներին կմղի սեփական լեզուն սիրելու, մաքրելու, գրական ճիշտ հայերենով արտահայտվելու ձգտման, նրանց մեջ պատասխանատվության զգացում կառաջացնի՝ բառերի ընտրության, օգտագործման և առհասարակ սեփական խոսքի կուլտուրայի նկատմամբ:

Լեզվամտածողության զարգացման կարևոր նախապայման կարող են դառնալ(իմ կարծիքով) նաև շարադրությունները:
Կարևոր պետք է համարել աշակերտների քերականական հասկացությունների գործնական արժեքը: Աշակերտը պետք է հասկանա, որ լեզվական այս կամ այն օրենքը սովորում է ոչ թե սերտելու, անգիր անելու, այլ, ամենից առաջ, գործնականում կիրառելու, ճիշտ մտածելու, խոսելու և գրելու համար: Հետևաբար այս հետազոտության միջոցով ես փորձել եմ ներկայացնել իմ կողմից կատարված գործնական աշխատանքը, սեփական փորձերով կիսվել եմ <<Հետազոտություն>> և <<Վերլուծություն>> բաժիններում և մանրամասն հանձնել եմ Ձեր դատին:

Հարց

Արդյո՞ք շարադրության մրջոցով կարելի է զարգացնել երեխայի լեզվամտածողությունը:
Կարո՞ղ է շարադրությունը դառնալ լեզվամտածողության զարգացման միջոց:

Վարկած

Ծարադրությունը կարող է զարգացնել սովորողի լեզվամտածողությունը և հարստացնել բառապաշարը:
Աշակերտների լեզվամտածողության զարգացման խնդիրն այսօր առավել մեծ նշանակություն ունի, քանի որ 21-րդ դարը մեզանից պահանջում է այնպիսի շրջանավարտներ, որոնք բազմակողմանի զարգացած լինելուն զուգահեռ նաև ստանձնած գործի մեջ ցուցաբերեն ստեղծագործական նախաձեռնություն, ունենան դարին համապատասխանող մտքի թռիչքներ: Այս գործում շարադրությունը նշանակալից դեր կարող է խաղալ և հիմք հանդիսանալ երեխայի խոսքի մտածելակերպի զարգացմանը: Ծարադրելու արվեստը բավականին բարդ է և պահանջում է ստեղծագործական

նախաձեռնություն, գիտելիքների առատություն, երևակայելու, վերլուծելու, տեսակետը հիմնավորելու, պատճառահետևանքային կապեր ստեղծելու, պրպտելու կարողություն:

Շարադրությունը՝ լինի վերլուծական, թե ստեղծագործական (գեղարվեստական) ինքնին ստեղծագործություն է, քանի որ գրելիս ակտիվանում են աշակերտների բոլոր գործողությունները: Շարադրությունը մարդու գործնեության բազմակողմանի պրոցես է: Այն իրենից ներկայացնում է աշխատանքի և տաղանդի միասնություն:

Այն հանդիսանում է գիտակցական նպատակաուղղված, համառ, երկարատև և հաճախ բավականին ծանր աշխատանք, որը պահանջում է մտավոր բոլոր ունակությունների ակտիվություն, լեզվի ճկունություն, բնավորության կամային և զգացմունքային գծերի դրսևորում, բարձր և կայուն աշխատունակություն:

Ահա թե ինչու շարադրությունը պետք է հասկանալ ամենից առաջ որպես արդյունավետ աշխատանք: Այն նպաստում է, ոչ միայն աշակերտների գրավոր խոսքի ունակությունների, այլև մտածողության զարգացմանը:

Խնդրի վերհանում

Շարադրություններ քիչ են հանձնարարվում դպրոցներում, սովորողների ստեղծագործական մտքին լուրջ ուշադրություն չի դարձվում: Այն, մինչև օրս, լեզվի ուսուցիչների կողմից տեսական և գործնական մշակման չի ենթարկվել, չեն ուսումնասիրվել շարադրության ընձեռած բոլոր հնարավորությունները:

Այս խնդրի լուծումը, փաստորեն, սահմանափակվում է միայն գրական խմբակի և գրականության ուսուցման ընթացքում հանձնարարված գեղարվեստական մի քանի շարադրությունների շրջանակներում, որն էլ բավարար չի երեխայի լեզվամտածողության զարգացման համար:

Իմ կարծիքով, աշակերտների լեզվամտածողության զարգացմամբ պետք է սիստեմատիկ կերպով զբաղվել նաև գրականության դասերին:

Խնդիրն այն է, որ հաճախ գիտական վերլուծությունը փոխարինվում է բովանդակության պարզունակ վերարտադրությամբ: Հայոց լեզվի և գրականության շատ ուսուցիչներ, շարադրութրունների ընթացքում ուշադրություն չեն դարձնում, մանավանդ, գրական երկի ձևի ու բովանդակության միասնության խնդրին և պատահական չէ, որ աշակերտները շարադրության մեջ այս կամ այն կերպ խոսում են կերպարների, գաղափարի, բովանդակության մասին, սակայն չեն նկատում գեղարվեստական երկի գեղեցկությունը, նրա լեզվաարտահայտչական և պատկերավորման միջոցները չեն ծառայեցնում դեպքերի ու իրադարձությունների, մարդկային բնավորությունների և այլնի բացահայտման խնդրին և այսպիսով ձևը բովանդակությունից զատելով՝ ստեղծում են չոր ու ցամաք, մերկապարանոց ու անհրապույր շարադրանքներ: Շարադրությունների մյուս խնդիրը տեսակների աղքատությունն է: Փաստորեն, հանձնարարվում են միայն գրական թեմաներով վերլուծական և ազատ թեմաներով՝ նկարագրական շարադրություններ:

Բայց չէ՞ որ կարելի է ուսուցանել նաև այլ տեսակներ՝ քննադատական և այլն, որոնք մեծ չափով կնպաստեն աշակերտների գրավոր խոսքի շրջանակների ընդլայնմանը, նրանց ընդհանուր զարգացմանը: Շարադրություններ քիչ են գրվում հատկապես չափածո երկերի մասին: Եվ պատահական չէ , որ մեր աշակերտները խուսափում են այն թեմաներից, որտեղ բանաստեղծն է նույնիսկ Տերյանը, Դուրյանը, Իսահակյանը, Թումանյանը: Սա նշանակում է, որ գրականության ուսուցչին չի հաջողվել աշակերտների մեջ սեր առաջացնել բանաստեղծության նկատմամբ, զգալ տալ նրա գեղեցկությունը, զգացմունքները հարստացնելու ներթաքուն հնարավորությունները:

Լավ կլինի, եթե ձևավորող շարադրություններ հանձնարարվեն նաև գեղարվեստական ստեղծագործություններից ստացած առաջին տպավորության մասին: Այսօրինակ գրավորները պետք է տրվեն մինչև գրական երկը դասարանում վերլուծելը: Այդ աշխատանքները չպետք է գնահատվեն, քանի որ աշակերտները կերպարների և այլնի արժևորման խնդրում կարող են թույլ տալ զանազան անճշտություններ, քանի որ դեռ չեն լսել ուսուցչին:

Այսօրինակ գրավորների նպատակն այն է, որ մեծ չափով կօգնեն ուսուցչին պատկերացում կազմելու աշակերտների մտածելակերպի, տվյալ ստեղծագործության վերաբերյալ, նրանց դատողությունների վերաբերյալ:

Եվ ահա, վերլուծության ընթացքում հաշվի առնելով այդ բոլորը՝ նա կաշխատի նրաց կողմնորոշել ու տանել ճիշտ եզրակացությունների ուղիով: Այդ տիպի գրավորը մեկ ուրիշ առավելություն ևս ունի: Երբ աշակերտը զգում է,որ շարադրություն է գրելու իր ստացած տպավորությունների մասին, անպայման կկարդա առաջադրված գրական երկը, մանավանդ, որ այդ հարցում նրան ոչ մի ծածկաթուղթ օգնել չի կարող:

Բացի դրանից, իր տպավորությունները գրելուց հետո նա կաշխատի ուշի ուշով լսել երկի մասին ուսուցչի վերլուծական խոսքը, որպեսզի իմանա իր արտահայտած կարծիքների ճշտությունը:

Լեզվամտածողության զարգացման կարևոր նախապայման են դառնում (իմ կարծիքով) նաև գրավոր աշխատանքները: Կարևոր նշանակություն է ստանում աշակերտների քերականական հասկացությունների գործնական արժեքը: Աշակերտը պետք է հասկանա, որ լեզվական այս կամ այն օրենքը սովորում է ոչ թե սերտելու, անգիր անելու, այլ, ամենից առաջ, գործնականում կիրառելու, ճիշտ մտածելու, խոսելու և գրելու համար:

Տվյալների հավաքագրում

Քվինթիլիանոսի ժամանակներում աշակերտներին ամիսը մեկ անգամ հանձնարարվել է գրել շարադրություն:

Նաև շարադրություն գրելով է դաստիարակվել աշակերտը: Օգոստոս կայսեր թոռներին ուսուցանած Վերիոս Փլակոսն առաջինն է եղել, որ մտահղացրել է աշակերտներին խրախուսելու համար նրանց միջև մրցություն կազմակերպել և հաղթողին գիրք նվիրել...

Լեզվամտածողության զարգացման առումով կարևոր նշանակություն են ստանում գրավոր աշխատանքների տեքստերը կամ թեմաները: Փոխադրություններն ու շարադրությունները կարող են ծառայել դաստիարակչական խնդիրներին: Այս առումով մեծ ներգործություն կարող են ունենալ ստեղծագործական և վերլուծական շարադրությունները: Չէ՞ որ լավ շարադրությունը պայծառ մտածողության, ինքնուրույն աշխատանքի, գրավոր խոսքի կայուն հմտությունների արդյունք պետք է լինի, որին հասնելու համար տևական ջանքեր պետք է թափել սովորել աշխատել բնագրի վրա, գլխավորը երկրորդականից տարբերել, ըմբռնել երևույթների պատճառահետևանքային կապերը, կերպարների հոգեբանությունը, այս ամենը շարադրել գեղեցիկ ու պատկերավոր խոսքով, հարուստ բառապաշարով, ինքնուրույնության և ստեղծագործական նախաձեռնության դրսևորմամբ:

Շարադրությունները տարբեր են լինում, բայց նրանց համար ընդհանուր է մեկ բան: Բոլոր շարադրությունները պետք է ունենան գեղեցիկ ու հստակ կառուցվածք, բաղկացած լինեն նախաբանից, հիմնական մասից և վերջաբանից:

Լինում են պատմողական, նկարագրական , որն համեմատաբար դժվար է և որը ճիշտ գրելու համար պետք է օժտված լինել դիտողականությամբ, զննականությամբ, կարողանալ զանազանել գլխավորը երկրորդականից: Աշակերտի համար ամենից բարդը դատողական վերլուծական շարադրություններ գրելն է՝ մտորելով, խորհելով, փիլիսոփայական ընդհանրացումներ կարդալով:

Առաջին պահանջն աշակերտների ուղղագրական ու լեզվաբանական հմտությունների աստիճանական մշակումն է, բառապաշարի հարստացումը:

Վերլուծական շարադրություն պետք է հանձնարարել միայն այն դեպքում, երբ ուսուցիչը արդեն համոզմունք է ստեղծել, որ բոլոր աշակերտներն ընթերցել են տվյալ երկը, պատկերացնում են սյուժեն, կերպարները, երևույթների

պատճառահետևանքային կապերը, մարդկային փոխհարաբերությունները և մանավանդ բանավոր դասերի և գրական բանավեճերի ընթացքում դրանց վերաբերյալ արտահայտել են իրենց անձնական կարծիքը, հանգել ճիշտ եզրակացությունների:

Այնպես որ, աշակերտների գրական գիտելիքները պետք է նախապես թրծվեն բանավորի քուրայում, դառնան հաստատուն ու գիտակցված, համոզիչ, վերջնական ու նոր միայն հանձնվեն տետրին: Ցավով պետք է ասել, որ այս ուղղությամբ դպրոցներում կան աններելի թերություններ: Որոշ ուսուցիչներ շարադրությունները ստուգելիս նկատում են միայն ուղղագրական և կետադրական սխալները և վերլուծելիս էլ հիմնականում անդրադառնում են դրանց:

Լավագույն դեպքերում հապճեպորեն կարմիր գիծ են քաշում ոճական տեսակետից անհաջող նախադասության տակ, ուրիշ ոչինչ: Եվ այդպես էլ աշակերտը գլխի չի ընկնում, թե այդ կարմիր գծերը ինչո՞ւ են նախշել շարադրանքը, որն է իրենց սխալը: Այնինչ, ստուգում ենք ուշադիր, ապա խնամքով սխալների տիպերը՝ հատուկ տետրում, յուրաքանչյուր աշակերտի անվան դիմաց նշում ենք նրա կատարած սխալները: Եթե ուղղագրական է, ապա, ո՞ր կանոնը չյուրացնելու հետևանք է, եթե քերականական է, ապա՝ այդ ո՞ր թեման է, որ աշակերտը հարկ եղածին պես չի յուրացրել, եթե ոճական է, ապա խնդրառությո՞ւնը չիմանալու արդյունք է, համաձայնությո՞ւնը կամ շարադասությունը: Այս ամենը գրի ենք առնում տետրում , լրացնում համապատասխան աղյուսակի սյունակները.

Աղյուսակը լրացնելուց հետո հեշտությամբ կարող ենք ի մի բերել ընդհանուր արդյունքները :

Եթե աշակերտների մեծ մասը սխալներ է թույլ տվել, լեզվական այս կամ այն օրենքը լավ չյուրացնելու հետևանքով, ապա, բնականաբար, նա որոշակի եզրակացություններ պետք է անի դրանից և աշխատանքի գլխավոր ուժը նպատակաուղղի այդ բացը վերացնելուն: **Կարևորն այն է, որ սխալներն անպատճառ խմբավորվեն և դասարանում հանգամանորեն վերլուծվեն, ապա՝ կիրառվեն շերտավորված ուսուցման**

արդյունավետ եղանակներ, այլապես աշակերտների խոսքի զարգացման բնագավառում հնարավոր չի լինի դրական արդյունքի հասնել:

Ուսուցիչը պետք է հասնի այն բանին , որ աշակերտը բառերի աշխարհից կարողանա ընտրել հնարավոր այն բառը կամ կապակցությունը, որի արտահայտած իմաստը ամենահարմարն է տվյալ կոնտեքստում: Եթե այդ ընտրությունը ճիշտ կատարվի, ապա աշակերտների գրավոր խոսքը կդառնա անհամեմատ ավելի սեղմ, ճկուն ու արտահայտիչ, ճոխ ու գեղեցիկ մայրենին իր տեղը չի զիջի կրկնվող և միօրինակ բառերին: Եվ աստիճանաբար կհարստացնի ոչ միայն աշակերտների բառապաշարը, այլև կզարգացնի նրանց գեղարվեստական ճաշակը, գնալով կնրբերանգվի աշակերտների զգացողությունը, թող նրանք պատմեն ձմեռային, գարնանային, ամառային արձակուրդներից, էքսկուրսիաներից ստացած տպավորությունների, իրենց աշխատասեր հարևանների, իրենց երազանքների, նախընտրած մասնագիտության, ընկերների, դիտած տեսանյութերի, մուլտֆիլմերի, կարդացած հերոսների, դրական ու բացասական կերպարների և այն ամենի մասին, որոնք կարող են երեխայի մոտ ձևավորել արժեհամակարգ, ապրումակցել հերոսին, գրողին, հեղինակին և ի վերջո շարադրությունը օգտագործել որպես լեզվամտածողության զարգացման միջոց:

Գրական թեմաներով շարադրություններում նկատվում են նաև այլ կարգի թերություններ.

- մտքի տրամաբանական խախտումներ
- գլխավորի փոխարեն երկրորդական հարցի շարադրում
- վերնագրի և շարադրանքի անհամապատասխանություն
- վերլուծության փոխարեն բովանդակության վերարտադրում
- գրական երկի արվեստի, լեզվաոճական առանձնահատկությունների անտեսում և այլն:

Կառուցվածքային բնույթի տարբեր թերություններն ամենից առաջ պայմանավորվում են այն բանով, որ ուսուցիչները ժամանակին չեն ուսուցանում նյութը պլանավորելու եղանակը:

Դպրոցականի բազմակողմանի զարգացման գործում կարևոր տեղ է գրավում

գեղագիտական դաստիարակությունը:

Պետք է կարողանալ նպաստել աշակերտի գրական, երաժշտական և գեղագիտական ճաշակների ձևավորմանը, որոնք դաստիարակության գործում մեծ դեր են խաղում: Եվ եթե ուզում ենք նաև հաջողված շարադրություն ունենալ, պետք է ինքնուրույն աշխատանքով, ստեղծագործական երկունքով ստեղծել շարադրության պլան: Յուրաքանչյուր աշակերտ պլանում կնախատեսի այնպիսի հարցեր, որոնք համահունչ են իր գիտելիքներին նախասիրություններին ու կարողություններին: Այդ պլանը չի կարող նմանվել մյուսների կազմածներին: Եվ եթե բոլորն էլ այդպես աշխատեն, չեն նմանվի նաև նրանց շարադրությունները: Այստեղից էլ, պլանի կարևոր դերը գիտակցել տալով, պետք է վերլուծության դասերին որոշ թեմաների շուրջը մշակել օրինակելի պլաններ, քննարկման նյութ դարձնել դրանց առանձին կետերը, պատճառաբանել այս կամ այն կետի անհրաժեշտությունը և այս ձևով աստիճանաբար սովորեցնել հետազոտած նյութի մեջ ճիշտ կողմնորոշվելու ուղիները. Ի՞նչ տվեց այդ վերլուծական շարադրությունը երեխային, ի՞նչ հոգևոր արժեքներ ձեռք բերեց, ի՞նչ դաստիարակչական նշանակություն ունեցավ տրված շարադրությունը երեխայի համար, զարգացրե՞ց արդյոք լեզվամտածողությունը:

Շարադրության պլանի նմուշ

Ստորև ներկայացնենք պլանի հարցադրման նմուշ, որը կարող է գրել ցանկացած աշակերտ, եթե ճիշտ կողմնորոշենք, ուղղորդենք, դաստիարակենք: Անհրաժեշտ է.

- Ներկայացնել որոշ տեղեկություններ այն մասին, թե ո՞ր ժամանակաշրջանում է ապրել և ստեղծագործել վերլուծվող ստեղծագործության հեղինակը, գրական ո՞ր ուղղության հետևորդ է եղել:
- Նշել տվյալ հեղինակի առավել հայտնի ստեղծագործություններից, այն մասին, թե ինչ բովանդակություն ունի վերլուծվող երկը, համառոտ ներկայացնել սյուժեն:
- Վերլուծաբար ներկայացնել ստեղծագործության գլխավոր գաղափարը, հեղինակի կողմից առաջ քաշած խնդիրները:

- Ներկայացնել ստեղծագործության մեջ գործածված գեղարվեստական միջոցները:
- Վերջում շարադրության հեղինակը ամփոփում է ասելիքը, կատարում է եզրահանգումներ, բացատրում է դաստիարակչական դերը՝ ի՞նչվերցրին, սովորեցին, որը ողջ կյանքում իրենց կուղեկցի:

Վերլուծում

Գրականության ուսուցման ընթացքում նկատվում են, որ վերլուծական շարադրությունները մեծ մասամբ միօրինակ են, գրքային:

Նրանց գրավոր խոսքում պակասում են ինքնուրույն մտածողությունը, ստեղծագործական նախաձեռնությունը: Իսկ գեղարվեստական շարադրություններն էլ այնքան քիչ են նախատեսվում (ըստ ծրագրի),որ դրանք բավարար չափով չեն նպաստում աշակերտների լեզվամտածողության զարգացմանը: Բացի դրանից, աշակերտների մեջ լինում են այնպիսիները, որոնք դրսևորում են ստեղծագործական հակումներ ու նախասիրություններ, ստեղծագործելու փորձեր անում: Սակայն այդպիսիների միտքը հղկելու, ճիշտ հունի մեջ դնելու , նպատակաուղղելու համար դասի ժամանակ քիչ հնարավորություններ են ստեղծվում: Բանն այն է, որ այդպիսի աշակերտները ավելի մեծ հետաքրքրություն են ցուցաբերում դեպի գրականությունը: Գրական նյութը վերլուծելիս, կամ շարադրություն գրելիս, նրանք հանդես են բերում պատկերավոր մտածողություն, ինքնուրույն և ստեղծագործական մոտեցում:

Ահա այս երևույթը մեզ հանգեցնում է այն հետևությանը, որ գեղարվեստական շարադրության համակողմանի ուսուցումը, հոտևաբար աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացումը, մեծապես կնպաստեն նրանց ընդհանուր պատրաստակամության բարձրացմանը, գրականության խոր և կայուն յուրացմանը:

Ըստ իս, կարելի է կիրառել մեթոդական հետևյալ հնարքը, որը, կարծում եմ, հնարավորություն կընձեռի մեզ՝ ուսուցիչներիս, դասի ժամանակ գործնականորեն զբաղվելու աշակերտների խոսքի, լեզվամտածողության, ստեղծագործական կարողությունների զարգացման հարցով:

Ուսումնական տարվա հենց առաջին օրվանից 8-րդ դասարանում պահանջեցի առանձնացնել ընդհանուր մի տետր, այնտեղ մեկ էջի սահմաններում ստեղծագործական որևէ աշխատանք կատարել՝ գեղարվեստական ազատ թեմայով և գրականության յուրաքանչյուր դասին ներկայացնել ինձ: Ամեն գրականության դասին պետք է ներկայացնեին նոր աշխատանք: Այս պահանջը պետք է կատարեին բոլորը՝ առանց հաշվի առնելու նրանց նախասիրություններն ու հակումները, որպեսզի ավելի մոտիկից ուսումնասիրեի յուրաքանչյուրի գրական հակումները, ընդունակությունները, և բացի դա, կնպաստեր նրանց ինքնուրույն մտածողությանը, բառապաշարի հարստացմանը, գրավոր ունակությունների զարգացմանը: Նշեցի, որ պետք է գրեն սրտամոտ, ծանոթ, հարազատ, ապրած դեպքերի ու երևույթների, ճանաչված մարդկանց մասին, շրջապատում կատարված իրադարձությունների մասին: Գրելանյութ կարող են լինել ընտանիքը, հարևանները, դպրոցը, ընկերները, քաղաքը և այլն, կարող էին նաև ուրիշ վերնագրեր ընտրել:

Գրելու էին մինչև կիսամյակի ավարտը: Ամեն դասին, շրջում և ստուգում էի և ապա մեկ-երկու աշակերտի կարդալ տալիս իրենց գրածն ու գնահատում, որով փորձում էի ոգևորել: Ամեն շաբաթվա վերջում, աշակերտների հետ (խմբային աշխատանք) տետրերը փոխանցելով մանրամասն ուսումնասիրում էինք: Զգացվում էր, որ գնալով աշակերտներն ավելի են հետաքրքրվում այդ հանձնարարությամբ, տետրերում ծնվում էին նոր գործեր՝ հեքիաթներ, պատմություններ, առակներ, բանաստեղծություններ և այլն: Շարունակությունը եզրահանգման մեջ կներկայացնեմ:

Որպեսզի շարադրության միջոցով զարգացնենք աշակերտների խոսքի ու մտածողության կուլտուրան, պետք է.

- Մեթոդական որոշակի հնարքների կիրառմամբ բարձրացնել աշակերտների գրագիտության մակարդակը:
- Ընդլայնել նրանց ճանաչողական և թեմատիկ ընդգրկումների սահմանները:
- Գրականության տեսությունից որոշակի գիտելիքներ հաղորդել ինչպես դասի, այնպես էլ արտադասարանական պարապմունքների ընթացքը

- Աստիճանաբար պետք է առանձնացնել աշակերտների լավագույն աշխատանքները և տպագրել:

  Այս ամենին զուգահեռ, հայոց լեզվի ուսուցիչը պարտավոր է իր առարկայի հնարավորության սահմաններում աշակերտների մեջ ձևավորել.
- խոսքի և մտածողության բարձր կուլտուրա
- հայրենասիրություն
- հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ
- գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն
- ընթերցասիրություն
- հարգանք գրքի ու սեփական անձի նկատմամբ
- ինքնության գիտակցում և արժանապատիվ կեցվածք
- համագործակցության կարողություն
- հանդուրժողականություն
- հարգանք ուրիշի տեսակետի նկատմամբ
- դիմացինին և ունեցածը արժևորելու ձգտում
- մարդկանց օգնության ձեռք մեկնելու պատրաստակամություն
- անսխալ ու վարժ կարդալու ու գրելու հմտություն
- բառապաշարի հարստացում
- ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողություն
- շարադրումների, փոխադրումների, ռեֆերատների համառոտագրման և կապակցված շարադրանք, խոսք ստեղծելու կարողություն
- տարբեր բնույթի (գեղարվեստական, արձակ և չափածո հրապարակախոսական , գիտական) տեքստերի լեզվաոճական վերլուծության միջոցով աշակերտների լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացում
- լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողություն և այլն:

Շարադրության միջոցով լեզվամտածողության զարգացման մեկ այլ մեթոդ կիրառեցի 9-րդ դասարանում գրականության դասաժամին: Մեսրոպ Մաշտոցի մասին ծրագրային նյութն ուսումնասիրելուց, տվյալ պատմական ժամանակաշրջանի, գրերի գյուտի, առաջին ուսուցչի մասին լրացուցիչ տեղեկություններ հաղորդելուց հետո, հանձնարարեցի գրել շարադրություն՝ <<Մեսրոպյան տառեր>> վերնագրով:

Ի դեպ, նախօրոք զգուշացրել էի, որ գրելու ենք ստեղծագործական շարադրություն: Հանձնարարել էի, որ կարդան կենսագրական գրքեր Մեսրոպ Մաշտոցի մասին, գրերի գյուտի, հայոց տառերի գաղտնիքների մասին: Նաև օգտվել հանրագիտարաններից և այլ աղբյուրներից:

Ձևավորող (ուսուցողական) շարադրությունը հանձնարարեցի գրել մեկ դասաժամում, քանի որ դպրոցական ծրագրով շարադրություններին նախատեսվում է մեկ դասաժամ: Հասցրինք պատմել, հարցերով ամփոփել Մեսրոպ Մաշտոցի կյանքի կարևոր դրվագները, գրերի գյուտի գաղտնիքները: Աշակերտները բավականին տեղեկություններ ունեին, զինված էին գիտելիքներով, կարդացել էին , նկատվում էր գրագետ խոսքի և մտածողության փոխկապակցվածությունը:

Քննարկեցինք,թե պատմաքաղաքական ինչ պայմաններում Մ. Մաշտոցը ստեղծեց հայոց գիրը և ինչ դեր ու նշանակություն ունեցավ այն հայ ժողովրդի հետագա կյանքում:

Օգտվեցինք այն պլանից, որը ներկայացրել եմ վերևում : Այնուհետև, համակարգչի օգնությամբ աշակերտները դիտեցին և լսեցին Պետրոս Պետրոսյանի կատարմամբ <<Մեսրոպյան հայոց տառեր>> տեսահոլովակը: Ես աշխատում էի հնարավորինս զգացմունքային դարձնել նյութը: Աշակերտները նույնիսկ հուզվեցին, ոչ ոք չէր խոսում , հետո գրեցին: Այնուհետև սկսեցին խմբերով ստուգել և քննարկել իրենց աշխատանքները: Այս շարադրությունը ևս, իր դրական ազդեցությունը ունեցավ սովորողների լեզվամտածողության զարգացման գործում:

Եզրահանգում

Ես պարզեցի և եկա այն եզրահանգման, որ սովորողները իրենց գեղարվեստական մտածողությամբ, լեզվական կուլտուրայով, ընդունակություններով խիստ տարբերվում են իրարից:

Ոմանք, օրինակ, գրում էին բանաստեղծություններ, շարադրում ինչ որ պատմություն, սակայն դեռևս պարզունակ էին, թեև նրանց աշխատանքներում մտքի և լեզվական սխալները (համեմատած տարվա սկզբի հետ) քիչ էին:

Ոմանց աշխատանքներում էլ կային ստեղծագործական մտքի փայլատակումներ, երևակայության թռիչքներ, պատկերավոր մտածողության տարրեր, հուզազգայական պահեր, լեզվական կուլտուրա: Աշակերտներից ոմանք էլ գրում էին ցածր մակարդակով, սակայն իրենց կարողությունների չափով:

Ինձ համար պարզ դարձավ, որ աշակերտներն օրավուր ավելի էին հետաքրքրվում այդ աշխատանքով: Գրական-ստեղծագործական աշխատանքի եռուզեռը սկսել էր տեղաշարժել նույնիսկ այնպիսի աշակերտների, ովքեր առհասարակ, քիչ էին հետաքրքրվում գրականությամբ:

Փորձը,(որի մասին արդեն խոսեցի <<Վերլուծություն>> բաժնում) ցույց տվեց, որ նույնիսկ այն աշակերտները, որոնք չէին սիրում գրականություն առարկան, ականատես լինելով դասընկերների ստեղծագործական ոգևորությանը, այն բանին, որ նրանք գրում են, գրածը դասարանում կարդում, ապրում դրանով խրախուսվում, շուտով նրանք ևս ակտիվացան և սկսեցին մտածել, ստեղծել, երևակայել: Այս աշխատանքի միջոցով աշակերտներին ավելի կապեցի գրականության հետ:

Ես հասա իմ առջև դրված նպատակին և եկա այն եզրակացության, որ եթե տարբեր միջոցներով, հնարներով, մեթոդներով մատուցենք նյութը, ցանկացած շարադրություն կզարգացնի սովորողի լեզվամտածողությունը:

Գրականության ցանկ

Պ.Գ.Խաչատրյան.Հայոց լեզվի և գրականության ուսուցման հարցեր
<<Լույս>> հրատարակչություն, 1980
Կ.Լ.Աղաբաբյան.Լեզվական մտածողության զարգացման ուսումնասիրումը
ՀՊՄՀ գիտ. տեղեկագիր, 2011
Գ.Բ.Ջահուկյան. Լեզվաբանության պատմություն,Երևան,հ. երկրորդ, հրատ. ,
2015